ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Երևանի Մովսես Խորենացու անվան 143 հիմնական դպրոց

VIIIա դասարան

Դասղեկ Սոնա Սարգսյան (Բալյան)

2022-23ուստարի

Դասարանի ընդհանուր բնութագիրը- Դասարանի կազմը՝ 18 աշակերտ, 10 տղա, 8 աղջիկ:Դասարանը համախմբված է, տիրում է առողջ և ջերմ մթնոլորտ: Աշակերտները ընկերասեր են, աչքի են ընկնում միմյանց օգնելու բարձր գիտակցությամբ:

Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում.

1. ՈՒշադրության կենտրոնում պահել և մշտապես հետևել դպրոցում սահմանված կարգ ու կանոնին:
2. Կարևորել մաքրությունը, անձնական հիգիենան,կարգապահությունը և ճշտապահությունը:
3. Դրական վերաբերմունք ձևավորել ընտանեկան սովորույթների,ազգային ավանդույթների նկատմամբ:
4. Դպրոց-ընտանիք կապը անցկացնել միջոցառումներ ծնողների և աշակերտների մասնակցությամբ:Ծնողներին ներգրավել բոլոր տեսակի դասարանական աշխատանքների մեջ:

- Հոգևոր դաստիարակություն -Կարևորել կրոնը յուրաքանչյուրի կյանքում, նշելով համախմբող և հայապահպան նշանակությունը:
- Գեղագիտական դաստիարակություն- Կրթել և դաստիարակել աշակերտներին նրանց մեջ գեղեցիկը գնահատելու և արժևորելու ունակությունները:
- Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն- յուրաքանչյուր աշակերտի գիտակցության մեջ սերմանել սեր, հարգանք դեպի Հայոց Բանակ
- Ֆիզիկական դաստիարակություն- Արժևորել սպորտը և այն մցնել յուրաքանչյուր աշակերտի առօրյա՝դարձնելով այն պարտադիր բաղադրիչ առողջ ապրելակերպի:
- Աշխատանքային դաստիարակություն -բացատրել աշխատանքի կարևորությունը յուրաքանչյուր ձևավորման գործում:
- Բնապահպանական դաստիարակություն -առավել հանգամանորեն աշակերտներին ծանոթացնել բնության հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

I կիսամյակ

№	Թեման	Նպատակը	Ամսաթիվ
1.	Գիտելիքի օր		01.09.22թ
2.	Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում	Հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	16.09.22թ.
3.	Անկախության տոն	Ձևավորել սեր առ հայրենիք:	23.09.22թ.
4.	Ինչպես վարվել աղբի հետ	Գիտակցել աղբի և թափոնների վնասակար ազդեցությունը բնության և մարդու առողջության վրա:	30.09.22թ.
5.	Ժամանակի ճիշտ կառավարում	Ժամանակի ճիշտ պլանավորման և կառավարման, առաջնային և երկրորդային գործողությունների դասակարգման և իրականացման հմտությունների ձևավորում:	07.10.22թ.
6.	Ինչպես կողմնորոշվել բարդ իրավիճակներում	Զարգացնել տրամաբանություն,սովորեցնել որոնել ուղիներ բարդ իրավիճակներից դուրս գալու ,կողմնորոշվելու դժվար իրադրություններում:	14.10.22թ.
7.	Ինչպես ապացուցել քո ճշմարտացիությունը	Սովորել խոսել միայն ճիշտ փաստերով,առողջ բանավիճել, ապացուցել սեփական ճշմարտացիությունը,ընդունել դիմացինի կարծիքը:	21.10.22թ.
8.	Ինձ մոտ ձևավորված վատ սովորությունները	Սովորողների մոտ զարգացնել առողջ ինքնաքննադատությունը,իրերին և սեփական արարքներին այլ տեսանկյունից նայելու կարողությունն ու հմտությունը, գնահատել արարքներն ու կշռադատել վատ սովորությունները:	04.11.22թ.
9.	Քչերը գիտեն,որ...	Սովորողները միմյանց ներկայացնում են հետաքրքիր փաստեր ամենատարբեր երևույթների մասին,որոնց մասին քչերը գիտեն, ստանում են նոր ինֆորմացիա:	11.11.22.թ.
10	Հանդիպում հոգեբանի հետ	Անկեղծ զրույց	18.11.22թ.

11.	«Լավ է,երբ... վատ է,երբ...»բանավեճ	Սովորողները տարբերակում են ամենատարբեր լավ ու վատ երևույթները, սովորում են «առողջ» բանավիճել, հակադարձվել՝ բերելով հիմնավոր փաստարկներ:	25.11.22թ.
12.	Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը	Սովորողները վերանայում են իրենց քայլերը, արարքները, իրենց փոխհարաբերությունները հարազատ մարդկանց և շրջապատի հետ:	02.12.22թ.
13.	Համակարգիչն ընկեր,թե՞ թշնամի	Հասկանալ, թե ինչ դեր ունեն համակարգիչը, հեռախոսը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները աշակերտի կյանքում, տարբերակել դրանց դրական և բացասական կողմերը:	09.12.22թ.
14.	Ես էլ քեզ նման ...	Ձևավորվում է ինքնահարգանք, հարգանք դիմացինի նկատմամբ,դրսևորվում է անձերի համեմատություն և հավասարություն:	16.12.22թ.
15.	Պահպանված և չպահպանված հին ավանդույթներ (հայերի Ամանորը)	Սովորողները զրուցում են հին հայկական ավանդույթների մասին, ծանոթանում են այն տարրերին,որոնք ներկայումս չեն պահպանվել,ամրապնդվում է ազգային գիտակցությունը:	23.12.22թ.

II կիսամյակ

1	I կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում: II կիսամյակի անելիքներ,կազմակերպչական հարցեր:		13.01.23
2	Ազնիվ և անկեղծ հարաբերությունները մեր դասարանում	Ձևավորվում է ինքնահարգանք, հարգանք դիմացինի նկատմամբ,դրսևորվում է անձերի հավասարություն, միմյանց վստահելու կարողություն:	20.01.23
3	Հայոց բանակ : Հայրենի՛ք ,ես զարկն եմ քո բազկի :	Զրույցի միջոցով յուրաքանչյուր աշակերտի գիտակցության մեջ սերմանել սեր, հարգանք դեպի Հայոց Բանակ:	27.01.23
4	Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները դպրոցում	Հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները	3.02.23
5	Եկեղեցին և ազգը: Տեառնընդառաջ տոնի խորհուրդն ու ծիսակատարությունները :	Քննարկման միջոցով հիմնավորել եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում: Խոսել Սուրբ Սարգսի տոնի մասին	10.02.23
6	«Վստահիր գրքերին, նրանք ամենամտերիմներն են. նրանք լռում են, երբ պետք է և խոսում են, երբ պետք է՝ անհրաժեշտության դեպքում բացելով ձեր առջև աշխարհը»- Էռնեստ Հեմինգուեյ	Աշակերտների միջոցով ներկայացնել Հովհ. Թումանյանի ստեղծագործությունները և խոսել «գիրք նվիրելու» օրվա խորհրդի մասին:	17.02.23
7	«Պատասխանատու քաղաքացի»	Քննարկել յուրաքանչյուր անհատի, քաղաքացու դերի և նշանակության մասին մեր հասարակության մեջ	24.02.23
8	«Լրատվամիջոցներ» :Արդյոք ունե՞նք վստահություն լրատվամիջոցների նկատմամբ:	Լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոց-ների դերը, որակյալ և անորակ լրատվական էջերի թեմաների մեկնաբանությունները:	3.03.23
9	Մայրության և գեղեցկության տոն		10.03.23
10	«Մոլորակի ժամ»	Մարտի 19-ին ամբողջ աշխարհում նշվում է Մոլորակի օրը: Դրա շրջանակներում մարդիկ մեկ ժամով անջատում են իրենց տան լույսերը: Քննարկել պատճառները:	17.03.23
11	Դեպքեր նշանավոր մարդկանց կյանքից	Յուրաքանչյուրը կներկայացնի որևէ հայտնի մարդու կյանքի պատմությունը, որն էլ կդառնա համընդհանուր քննարկման թեմա:Աշակերտները կսովորեն չընկճվել ձախողումներից և հաղթահարել դժվարությունները:	24.03.23

12	«Երազում եմ դառնալ....»	Քննարկումներ ապագա մասնագիտության ընտրության շուրջ:	7.04.23
13	«Փորձեք լինել գոնե մի փոքր բարի և դուք կտեսնեք, որ դուք այլևս ի վիճակի չեք վատ արարք կատարել»- Կոնֆուցիոս	Աշակերտների մոտ ձևավորել բարի և դրական հատկանիշներ:	14.04.23
14	Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր		21.04.23
15	«Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով»	Սովորել դասակարգել կարևորը անկարևորից և արժևորել կարևորը: Ձևավորել արժեհամակարգ,կատարել ինքնավերլուծություն:	28.04.23
16	Հանդիպում հոգեբանի և սոցմանկավարժի հետ		5.05.23
17	Առողջ ապրելակերպի կանոններ	Քննարկել ծխախոտի, ալկոհոլի վնասները:	12.05.23
18	Ուսումնական տարվա ամփոփում . «Ի՞նչ եմ տանում այս տարի ինձ հետ դպրոցից»:	Քննարկել անցնող ուսումնական տարվա ձեռքբերում-ները, հետաքրքիր պահերը և դպրոցի դերն ու նշանակությունը այդ ամենի մեջ:	19.05.23
19	Ամփոփում: Էքսկուրսիայի քննարկում		24.05.23